

**ՅՈՐԴԱՆԵԱՆՆԵՐ**

**ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆԱՑ ՀԱԻԱՔԸ  
ՋԱՔԱՐԻԱ ԿՈՓԵՑԻԻ ԵՒ ԵՂԻՇԷ ԴՈՒՐԵԱՆ ՊԱՏՐԻԱՐՔՆԵՐՈՒ  
ՅՈՐԴԱՆԵԱՆՆԵՐԸ  
1980**

**(Եղիշէ Տէրտէրեան և Շնորհք Պատրիարքներու մահուան 30-ամեակին առթիւ)  
(1990-2020)**

*«Հայ Եկեղեցին իբրեւ կրօնական հասարակութիւն մը սկիզբէն ունեցաւ այն կոչումը որով քաղաքականապէս վրանգոյսած ազգի մը զօրութիւնը պիտի ապահովէր բարոյական եւ հոգեւոր փրկութեամբ»:*

**ԵՂԻՇԷ ՊԱՏՐԻԱՐՔ ՏԷՐՏԷՐԵԱՆ**

*«Աստուծոյ ցնորեղութեան մէկ մասը կը նկատեմ Հայ Եկեղեցին, որուն համար մենք հպարտ պիտի զգանք որ Աստուծոյ ազգերը եկեղեցիներու վերածելու իրողութիւնը իրականացած է լիովին մեր մէջ»:*

**ՇՆՈՐՀՔ ՊԱՏՐԻԱՐՔ ԳԱԼՈՒՍՏԵԱՆ**

**Հայրապետական Կոնդակ**

Սոյն պատմական անդրադարձը կ'ընծայենք Երուսաղէմի Եղիշէ Տէրտէրեան եւ Կ. Պոլսոյ Շնորհք Գալուստեան Պատրիարքներու յիշատակին, որոնք նախագահեցին 1980 թուի Երուսաղէմի Միաբանական Հաւաքին, ու տասնամեակ մը ետք 1990 թուականին չորս շաբաթներու տարբերութեամբ վախճանեցան:

Առաջին հերթին Ամենայն Հայոց Տ. Տ. Վազգէն Ա. Կաթողիկոս իր 1980 Յուլիս 28 թուակիր յատուկ Կոնդակով կ'ողջունէր Երուսաղէմի Միաբանական Հաւաքը զայն նկատելով «նշանակալից նախաձեռնութիւն մը մեր Մայր Եկեղեցւոյ յետագայ գործունէութեան ճանապարհին»: Հայրապետը Մայր Աթոռէն կ'ուղարկէր իր ներկայացուցիչները՝ Սիոն Արքեպիսկոպոս Մանուկեան՝ Ատենապետ Գէորգի, եւ Կոմիտաս Արքեպիսկոպոս Տ. Ստեփանեան, երկուքն ալ նախկին սաներ Երուսաղէմի Աթոռին: Երկրորդ՝ Շնորհք Պատրիարք Գալուստեանի մասնակցութիւնը յատուկ կշիռ մը կու տար օրակարգին, որուն վրայ ակներեւ էր իր բանախօսութիւնը Հայ Եկեղեցւոյ կանոններու եւ կարգապահութեան մասին:

**Տրախրեալներ**

Հրաւերովը Երուսաղէմի Հայոց Եղիշէ Պատրիարք Տէրտէրեանի, Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց պատրիարքութենէն ներս 1980 թուի Օգոստոս 3-10 միաբաններու եւ նախկին շրջանաւարտ 46 հոգեւորականներու մասնակցութեամբ խորհրդակցական բացառիկ հաւաք մը գումարուեցաւ, առաջինը իր տեսակին մէջ, նախագահութեամբ Եղիշէ եւ Շնորհք Գալուստեան Պատրիարքներու: Հաւաքին գլխաւոր նիւթն էր «Մեր եկեղեցին առաքելութիւնը այսօր»: Ներկայ էին տասն արքեպիսկոպոսներ, վարդապետներ

եւ քահանաներ, բոլորն ալ ուսանած ժառանգաւորաց Վարժարանին եւ Ընծայարանին, Սուրբ Աթոռ ժամանելով ամէն ցամաքամասերէն:

Եղիշէ եւ Շնորհք Պատրիարքներէն ետք բանախօսեցին կամ ժողովներուն ատենապետեցին հետեւեալ տաս արքեպիսկոպոսները՝ յատուկ զեկուցումներով. Սիրոն Մանուկեան, Սերովբէ Մանուկեան, Հայրիկ Ասլանեան, Կոմիտաս Տ. Ստեփանեան, Տիրայր Մարտիրոսեան, Պսակ Թումայեան, Թորգոմ Մանուկեան, Շահէ Աճէմեան, Գարեգին Գազանճեան եւ Զաւէն Զինչիւսեան: Տարին յոբելինական ըլլալով, պիտի նշէր ժառանգաւորաց Վարժարանի հիմնադիր Զաքարիա Կոփեցի Պատրիարքի 200, եւ Եղիշէ Դուրեան Պատրիարքի 50-ամեակները, որոնք միաբանական սոյն հաւաքը աւելի թելադրական կը դարձնէին:

### **Եղիշէ Պատրիարքին Խօսքը**

Եղիշէ Պատրիարք կատարեց միաբանական հաւաքին բացումը ողջունելով բոլորը «այս սուրբ տան մէջ, որ Տունն է Աստուծոյ եւ բոլոր անոնց, որոնք այս Հաստատութեան կաթն ու մեղրը ծծեցին»:

Երուսաղէմի Պատրիարքի բանախօսութեան նիւթն էր «Հայ Եկեղեցւոյ ազգային դերը» զոր ներկայացուց իրեն յատուկ պերճախօսութեամբ, թէ «ազգային է հայ եկեղեցին հիմ ունենալով անոր ծագման եւ զայն գոյաւորող շարժառիթներու այլազան պարագաները», վստահեցնելով թէ Հայ Եկեղեցին իբրեւ կրօնական հաստատութիւն սկիզբէն կոչումը ունեցաւ «քաղաքականապէս վտանգուած ազգի մը գոյութիւնը ապահովելու բարոյական եւ հոգեւոր փրկութեամբ», չմոռնալով յիշեցնելու այն մտահոգութիւնը թէ «եկեղեցիին աստուածաբանական ըմբռնումին հետ դիւրին չի հաշտւիր ազգային մակդիրը»:

Պատրիարքը զգուշութեամբ կ'ընդգծէր հաւասարակշռութիւնը հոգեւոր եւ ազգային տարրերուն միջեւ, ու զայն բիրեղացնելով՝ հասկնալի կը դարձնէր միաբանակիցներուն, յիշեցնելով անոնց պարտքը որ նոյն ոգիով ուսուցանեն մեր ժողովուրդը:

Անդրադառնալով Եղիշէ Պատրիարքի բանախօսութեան, Շնորհք Պատրիարք կ'աւելցնէր իր մեկնաբանութիւնը աւելի պարզ բացատրելով որ Աստուծոյ գերագոյն նպատակներէն մին եղած է աշխարհի ժողովուրդները կամաց-կամաց եկեղեցիի վերածել, եւ այդ նպատակով հայ ազգին մէջ առաւելագոյնս իրականացած է այդ նպատակը, որուն շնորհիւ մենք դարձանք «իրական եւ յատկապէս Հայ Եկեղեցի»: Շնորհք Պատրիարք Հայ Եկեղեցին «Աստուծոյ տնտեսութեան մէկ մասը կը նկատէր՝ լիովին իրականացած մեր մէջ, ուր ազգայինն ու հոգեւորը «երջանիկ կերպով զիրար գրկած են, եւ թէ մենք զանոնք այնպէս պիտի հասկնանք որ մին կամ միւսը առաւել շեշտելով, անոնցմէ ոչ մէկը տուժէ, այլ մէկը միւսին լրացուցիչը ըլլայ»:

### **Չորս Հիմնական Նիւթեր**

Համագումարը չորս նիւթերու վերածեց ընդհանուր օրակարգը.

ա) Ծէս եւ արարողութիւն, զեկուցող՝ Սերովբէ Արքեպս. Մանուկեան:

բ) Կարգ ու կանոն, զեկուցող՝ Շնորհք Պատրիարք:

գ) Քրիստոնէական դաստիարակութիւն, զեկուցող՝ Թորգոմ Արքեպս. Մանուկեան:

դ) Մեր եկեղեցւոյ ազգային դերը, զեկուցող՝ Եղիշէ Պատրիարք:

Իւրաքանչիւր զեկուցողի կողքին կ'ատենապետէր Արքեպիսկոպոս մը՝ օժանդակութեամբ 10 հոգեւորականներու:

### **Շնորհք Պատրիարք**

Կ. Պոլսոյ Պատրիարքը իր նիւթը «Կարգ ու կանոնը» կը նկատէր մեր ժամանակներու «մեծ պահանջքը, որոնց պէտք ունինք մեր հանապազօրեայ հացէն աւելի եթէ ներկայ ժամանակներուս եկեղեցին պիտի գոյատեւէ իբրեւ կազմակերպեալ հաւաքականութիւն», շեշտը դնելով Օձնեցի Հայրապետի կազմած «Կանոնագիրք»-ին վըրայ, նախադասելով աղօթական եւ աշխատունակ ձգտումները, աւելի հետամուտ ըլլալով հոգեւոր քան թէ աշխարհիկ կեանքի: Շնորհք Պատրիարք ուղղակի յայտնի կը դարձնէր կարգապահութեան պակասը մեր հոգեւոր կեդրոններէն ներս որուն հետեւանքը կրած ենք միշտ: Միաբանական կեանքէ ներս այնքան կենսական պէտք է ըլլայ կանոնի գործադրութիւնը ինչպէս անցեալին մեր եկեղեցական ժողովներուն, որքան կարելի ըլլայ այդ կանոնները կեանքի կոչելով եւ ոչ միայն զանոնք թուելով կամ վերջիշելով:

### **Թորգոմ Արքեպիսկոպոս**

Զեկուցող Սրբազանը կրօնական դաստարակութեան հանդէպ վտանգը կը տեսնէր «ազգերու եւ ժողովուրդներու խառնարանին մէջ ուր փոխադարձ ազդեցութեանց կ'ենթարկուէին անոնք», շեշտելով միանգամայն որ «Հայ եկեղեցիին կոչումը առաջնորդել է հայ մարդը, հայ ընտանիքը, հայ համայնքը եւ հայ ազգը դէպի իր գոյութեան նըպատակակէտը», անդրադառնալով Ոսկեդարեան, Միջին Դարերու եւ մօտաւոր Գէորգեան եւ Արմաշի հայ կրթական օճախներուն որպէս դաստիարակչական յարաճուն գործունէութիւն: Բանախօսութեան աւարտին Սրբազանը կը մատնանշէր «եկեղեցականութեան հանդէպ հետաքրքրութեան նուազումը զանազան պատճառներով»:

### **Սերովբէ Արքեպիսկոպոս**

Մէսին եւ Արարողութեան նախաքրիստոնէական բնոյթը Քրիստոսով դարձաւ «բարձրորակ արուեստի մակարդակին՝ գրականութեամբ, երաժշտութեամբ, ճարտարապետութեամբ եւ նկարչութեամբ», կը բնորոշէր Բանախօս Սրբազանը, զատորոշելով ծէսին եւ արարողութեան «շտեմարան» մը ըլլալու վիճակին եւ «քրիստոնէական դաստիարակութեան ազնուական միջոց» մը ըլլալուն միջեւ: Այն ատեն է որ մարդկութիւնը Աստուծոյ անտեսանելի շնորհները կը ստանայ: Սերովբէ Սրբազան թոյլատու չէր գտներ «անհարկի ըստ կամս եւ սխալ փոփոխութիւններ» կատարել մեր առինիքնող ծէսին վրայ: Իր խօսքը եզրակացնելով Սրբազանը կ'ըսէր թէ արդի ժամանակներուն հայ ժողովուրդը եւ եկեղեցական արարողութիւնները «իրարու հետ չեն շաղախուած եւ ծէսն ու ժամապաշտութիւնը իրենց օգտաշատ ազդեցութիւնը չեն պահած մեր ժողովուրդի հաւատքին մէջ»: Կը զգուշացնէր նաեւ որ արարողութիւնները «մեքենական ձեւով» չկատարուին, որուն հետեւանքը կ'ըլլայ ժողովուրդը «զրկել կրօնական դաստիարակութենէ»:

### **Եղիշէ Պատրիարք**

Երուսաղէմի Պատրիարքը հայ եկեղեցւոյ ազգային դերին վերաբերմամբ անոր ծագման եւ գոյաւորման պատմական ընթացքը կը ճշդէր «այլազան շարժառիթներով»: Կը շեշտէր հայ եկեղեցւոյ սկիզբէն ունեցած իր կոչումը որով «քաղաքականապէս վըրտանգուած ազգի մը գոյութիւնը պիտի ապահովէր ու ամրապնդէր»: Քաղելով Ոսկեդարեան հայ ժողովուրդին ընծայուած մեծագոյն բարիքները որոնցմով միայն հայ ժողովուրդը պահեց իր ինքնութիւնը, աւելի ընդարձակ հունի մը մէջ հայ եկեղեցին կը տեսնէր դրականապէս ազդուած դրացի ազգերու քրիստոնէական մշակոյթներէն յանգելով «դիւցազներգութիւններու» շարքի մը, «շնորհիւ մեր վանքերուն՝ ամէն մէկը հայ-

րենիք մը ըլլալով իրենց պարիսպներով՝ հագած զրահը մեր ցեղային յատկութիւններուն»:

Պատրիարքը կը զգուշացնէր պահել հաւասարակշռութիւնը հոգեւոր եւ ազգային տարրերուն միջեւ, թէ հայ եկեղեցին միայն ազգապահպանման ազդակ մը չէ, այլ անկէ առաջ հաստատութիւն մը որուն կառոյցին մէջ ծաղկած են այն ստեղծագործութիւնները որոնք անոր ազգային նկարագիրը կազմեցին:

### **Հաւարին Փակումը**

Զեկուցումները բարեյաջող անցան ու փակման խօսքը տրուեցաւ նախ Շնորհք Պատրիարքին, իր խօսքերով «այս շատ գնահատելի ձեռնարկին համար», թելադրելով որ «Սաղիմական Ականդեմիա» մը կազմուի այս նոյն դպրոցէն ելած նոյն հոգեւորականներուն կողմէ: Ապա Եղիշէ Պատրիարք շնորհակալութիւն յայտնեց Շնորհք Պատրիարքին իր ներկայութեան եւ մասնակցութեան համար որուն վերջին թելադրութիւնը տեղին եւ գործադրելի նկատեց: Յատուկ յոբելինական նշումով միաբաններ մասնակից դարձան Զաքարիա Պատրիարքի ծննդեան 200, եւ Եղիշէ Դուրեան Պատրիարքի մահուան 50-ամեակներու յուշահանդէսին: Նոյն առիթով «Սիոն» ամսագրի բացառիկ թիւ մը լոյս տեսաւ է-ժ միացեալ համարով, ուր մանրամասնօրէն արձանագրուեցաւ Հաւարին ընդհանուր գործընթացը հարիւրամեայ պատմական հարուստ տուեալներով:

**ԴՈԿՏ. ԶԱԻԷՆ ԱԻ. ՔՇՆՅ. ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ**

### **ԳՐԱԲԱՐԵԱՆ ԱՍՈՅԹՆԵՐ**

Իբրեւ հաւատայ՝ սիրէ. և իբրեւ սիրէ՝ յուսայ. և իբրեւ յուսայ՝ արդարանայ:

Ոչ նորոգի, զի ոչ հնանայ, ոչ մանկանայ, զի ոչ ծերանայ:

Ահաւասիկ տեսանեմ զի արեգակն գնայ, լուսին և աստեղք ընթանան, ամպք սլացեալք տարածանին:

Ամենեւին գեղեցիկ ես, մերձաւոր իմ, և արատ ինչ ոչ գոյ ի քեզ:

Աղուէս, դո՞ւ էիր խանգարիչ՝ որ այսչափ աշխատ արարեր զմեզ. դո՞ւ ես այն, որ կոտորեցեր զԱրիս այսչափ ամս, և զի՞ գործես զմահ աղուէսու սպանից զքեզ:

Եթէ հաւաստեալ խնդրիցեմք, գտանիցեմք:

Յորժամ դուստր զմայր անարգիցէ, և նու զկեսուր իւր: